

Պատրաստութեան Աղօթք

Յանուն Հօր Հայր Մեր

Տեր Յիսուս, քու փրկարար սիրոյդ ահաւոր ու շարունակական ողբերգութիւնը պիտի պարզուի մեր աչքերուն առջեւ: Խոնարհ երկրպագութեամբ կը պաշտենք քեզ, որ ներկայ ես սուրբ խորանին վրայ, ուր ամէն օր կը վերանորոգես Գողգոթայի գոհը:

Տեր դուն ըսիր, **«Ձեր խաչն առէ՛ք ամէն որ եւ իմ ետեւէս եկէ՛ք»**, բայց կը վախնանք որ անոր բեռը չափազանց ծանրակշիռ ելլայ: Մինչեւ Գողգոթա քեզի հետեւելու հրամանը անողոք բախտի օրէնք չէ, այլ մշտատեւ երջանկութեան պայման: Փարատէ՛ մեր վախը, սիրելի Յիսուս. Դուն քեզի կանչեցիր բոլոր յոգնածներն ու բեռնատրները որպէսզի ասոնք քու մէջդ գտնեն հանգիստը իրենց հոգիներուն:

Ուստի յօժարակամ կ'ուզենք այս վայրկեանիս մեր խաչը ուսերնիս առնել եւ հետեւիլ քեզի սուրբ լեռան վրայ: Այսպէս պարտինք քեզ սիրել բայց որպէսզի այս հոգեւոր հրահանգը Սուրբ Սիրտիդ աւելի հաճոյ ելլայ, կը միացնենք զայն Սուրբ Սօրդ, Սուրբ առաքեալներուն եւ բոլոր ջերմեռանդ քրիստոսնեաներու բորբոքեալ սիրոյն: Ամէն:

Առաջին կայան

Յիսուս մահուան կը դատապարտուի

Երկրպագութիւն կ'նեն քեզի, Քրիստոս եւ կ'օրհնէմ քեզ որովհետեւ սուրբ խաչովդ աշխարհը փրկեցիր

Տեր Յիսուս ինչ՞ ծանր պարագաներու մէջ դատաստանի կանչուեցար: Յուդան մատնեց քեզ, առաքեալներդ քեզ ուրացան ու լքեցին. Չարագործի նման ատեանէ ատեան քաշեցին քեզ բռնցկահարեցին ու ապտակեցին: Եւ այժմ Պիղատոսի աջ կողմը կեցած ես դուն արդարը որ եկած էիր կեանքդ տալու շատերուն փրկութեան համար: Չախին կեցած է Բարաբբաս, չարագործը, ապստամբը, մարդասպանը, մինչ դատաւորը ամբոխին կը հարձնէ ըսելով: **«Այս երկուքէն ո՞ր մէկը կ'ուզէք որ ազատ արձակեմ քրիստո՞սը թէ Բարաբբասը»**: Մեր կեանքին մէջ քանի անգամներ Բարաբբասը ընտրեցինք ու խաչեցինք քեզ: Տեր հիմա ոտքդ ինկած թողութիւն կը խնդրենք ներէ՛ մեզի, որ դատաստանի օրը յաւիտենական մահուան չդատապարտուինք ու չզրկուինք քու երանաւետ տեսութենէդ: Ամէն:

Հայր Մեր... Ողջոյն քեզ...Փառք Հօր

Խաչուած Յիսուս ողորմէ մեզի եւ գաւարանի բոլոր հոգիներուն:

Երկրորդ կայան

Յիսուս խաչը իր ուսը կ'առնէ

Երկրպագութիւն կ'նեն քեզի, Քրիստոս եւ կ'օրհնէմ քեզ որովհետեւ սուրբ խաչովդ աշխարհը փրկեցիր

Տեր Յիսուս, դուն այդ խաչը մեր սիրոյն համար կրեցիր, ուրախութեամբ եւ առանց ոչ մէկ գանգատի սիրով համբուրեցիր զայն եւ ուսերուդ վրայ դրիր:

Տեր Յիսուս ահաւոր տառապանքիդ մէջ մէկ ուրախութիւն ունեցար գիտնալով թէ կատարեալ Հօրդ կամքն որ կը կատարելիր եւ ոչ թէ քու կամքդ: Երջանիկ էիր որովհետեւ Հօրդ կամքը կատարելով փրկեցիր մարդկութիւնը, ազատեցիր զայն մեղքերէն եւ դժողքի սարսափէն:

Յանուն քու սուրբ խաչիդ, Տէր շնորհէ՛ որ մենք ալ միշտ միացնենք մեր կամքը քու հօրդ կամքին, Հայր Աստուծոյ կամքին: Զօրացո՛ւր մեզ, որ մենք ալ մեր կեանքի բոլոր նախատինքներուն ու չարչարանքներուն խաչը սիրով մեր ուսերուն վրայ առած քեզի հետեւինք: Թող որ մենք ալ քու բեռդ թեթեւցնենք եւ մեր մեղքերը ներուին այդպիսով: Ամէն:

Հայր Մեր... Ողջոյն քեզ...Փառք Հօր

Խաչուած Յիսուս ողորմէ մեզի եւ գաւարանի բոլոր հոգիներուն:

Երրորդ Կայան

Յիսուս առաջին անգամ կ'իյնայ

Երկրպագութիւն կ'ներ քեզի, Քրիստոս եւ կ'օրհնէմ քեզ որովհետեւ սուրբ խաչովդ աշխարհը փրկեցիր

Ամեղ Գառն Աստուծոյ, քու խաչովդ մեր մեղքերուն բեռը վերցուցիր, եւ անոր սաստիկ ծանրութեան տակ ցաւալի օրէն ընկճուեցար եւ գետին ինկար: Ձերքերուդ եւ ոտքերուդ փակած վերքերը դարձեալ արիւնեցան եւ հողը ներկեցին: Այդ ծանր խաչափայտը մեր մեղքերուն ծանրութիւն էր, մարդկութեան մեղքերն ու ոճիրները. Այդ ինկած վիճակիդ մէջ դուն մեր մեղքերուն նոխազը եղար Աստուծոյ առջեւ:

Ներէ՛ մեզի, Տէր, քու անկումիդ արդիւնքներով ողորմէ՛, ոյժ ու կորով պարգեւէ՛ մեզի որպէսզի այսուհետեւ չիյնանք փորձութեան մէջ ու քեզ չվշտացնենք, այլ սիրենք քեզ մեր ամբողջ հոգիով: Ամէն: **Հայր Մեր... Ողջոյն քեզ...Փառք Հօր**

Խաչուած Յիսուս ողորմէ մեզի եւ գաւարանի բոլոր հոգիներուն:

Չորրորդ կայան

Յիսուս կը հանդիպի իր Սուրբ Սօրը

Երկրպագութիւն կ'ներ քեզի, Քրիստոս եւ կ'օրհնէմ քեզ որովհետեւ սուրբ խաչովդ աշխարհը փրկեցիր

Ամենասուրբ Յիսուս, այն բոպէին երբ Սուրբ Աստուածածինը քեզ տեսաւ մահապարտի վիճակի մէջ դուն տառապանքներուն ու կսկիծներուն դառնագոյնը ապրեցար: Վերջին անգամ ըլլալով գրկեցիք զիրար: Մակայն դահիճները ձեզ վայրագորէն անջատեցին, սաստկացնելով ձեր վիշտն ու կսկիծը:

Ձաւագին Մայր, հանդիսաւոր այդ ժամուն, դուն հերոսութեամբ միացար քու ամենասիրելի Որդիիդ ցաւերուն, աշխարհը փրկելու համար տուկալի կապանքէն, եւ զայն կրկին օժտելու Աստուծոյ սիրով, ու սորվեցնելու մեզի սիրել չի նշաշակեր տիրել, այլ սիրել կը նշանակէ տալ եւ զոհուիլ ուրիշներու համար:

Ո՛րքայն երախտապարտ ենք քեզի, Յիսուսի եւ մեր Մայրը, որ մեր սիրոյն համար համակերպեցար Յիսուսի չարչարանքներուն ու մահուան հետ: Ընդունէ՛ աստուծմէ, որ մեր տեւական ապաշխարութեամբ կարենանք գնահատել մեզի համար թափուած այդ թանկագին արիւնը: Ամէն:

Հայր Մեր... Ողջոյն քեզ...Փառք Հօր

Խաչուած Յիսուս ողորմէ մեզի եւ գաւարանի բոլոր հոգիներուն:

Հինգերորդ կայան

Միմոն Կիւրենային Կ'օգնէ՛ Յիսուսի

Երկրպագութիւն կ'ներ քեզի, Քրիստոս եւ կ'օրհնէմ քեզ որովհետեւ սուրբ խաչովդ աշխարհը փրկեցիր

Համբերատար Գառն Աստուծոյ, դահիճներդ տեսան որ դուն բոլորովին ուժասպառ էիր դարձեր տառապանքներէն ու ցաւերէն: Հրեաները վախցան որ դուն ճամբան մահանայիր եւ յաջողէր իրենց խաչելութեան ծրագիրը: Ուստի Միմոն Կիւրենացիին ստիպեցին որ օգնէր քեզի եւ որոշ ժամանակ կրէր ծանր խաչափայտը:

Տէր Յիսուս, թոյլ տուր որ մենք ալ մեր օրուայ խաչերը կրենք Սիմոնի նման եւ նաեւ օգնենք ուրիշներու իրեց խաչերը կրելու իբր օրինակ քու զօհաբերութեամբդ:

Դուն մեզի համար տկարացար որպէսզի մեր հոգիները զօրացնես: Թոյլ տուր որ երբեք մեր կեանքի ընդացքին չի գանգատինք մեր խաչերու ծանրութենէն այլ տուր իմաստութիւնը որ կատարեալ ձեռով հասկնանք անոր ետեւէն քալիք երկինքի փառքը

Այնպէս ին՝ չպէս որ Պօղոս առաքեալ ըսաւ: «Այս ժամանկին չարչարանքները բան մը չեն քալու փառքին քով՝ որ մեզի պիտի յայտնուի»: Ամէն:

Հայր Մեր... Ողջոյն քեզ...Փառք Հօր

Խաչուած Յիսուս ողորմէ մեզի եւ գաւարանի բոլոր հոգիներուն:

Վեցերորդ կայան

Վերոնիգա Յիսուսի դէմքը կէ սրբէ

Երկրպագութիւն կ'նեն քեզի, Քրիստոս եւ կ'օրհնէմ քեզ որովհետեւ սուրբ խաչովդ աշխարհը փրկեցիր

Քաղձրագութ Փրկիչ, Քու սուրբ դիմագիծէդ առատօրէն կը հոսէին արիւն ու քրտինք: Արիասիրտ կին մը, Վերոնիգան, մօտեցաւ քեզի տխրութեամբ եւ յուզուած այդ փոշիով ծածկուած անճանաչելի դարձած դէմքդ նայելով քօղը զլիւն հանեց խոնարհութեամբ սրբեց Աստուածաին երեսդ: Իսկ դուն Տէր Յիսուս անոր ծառայութիւնը ընդունելով անմիջապէս վարձատրեցիր զինքը անոր քօղին վրայ դրօշմելով ցաւալի կերպարդ:

Տէր Յիսուս, ողորմած Յիսուս, դրօշմէ՛ նաեւ մեր սրտերուն եւ հոգիներուն մէջ քու Աստուածաին կերպարդ որպէսզի երբեք չի մոռնանք մեր փրկութեան թանկագին գինը եւ միշտ մեր սիրտերը քու կերպարդ կրելով հասնինք երկինքի արքայութեան որ դուն հաճեցար մեզ տանիլ վայելելու Հայր Աստուծոյ, Աստուածածնի եւ բոլոր Սուրբերու եւ հրեշտակներու հետ միասին յաւիտենական փառքը: Ամէն:

Հայր Մեր... Ողջոյն քեզ...Փառք Հօր

Խաչուած Յիսուս ողորմէ մեզի եւ գաւարանի բոլոր հոգիներուն:

Եօթերորդ կայան

Յիսուս երկրորդ անգամ կ'իյնայ

Երկրպագութիւն կ'նեն քեզի, Քրիստոս եւ կ'օրհնէմ քեզ որովհետեւ սուրբ խաչովդ աշխարհը փրկեցիր

Տէր Յիսուս, դարձեալ այդ խաչին ծանրութեան ներքեւ ինկար մեր մեղքերու ծանրութենէն, դահիճներդ անխիղճ ձեռով քեզ հրեցին եւ քաշքշեցին ցաւերդ աուելցնելով: Տէր տպգրէ՛ մեր սրտերուն մէջ Աստուածային գեղեցիկ շնորհքներդ որպէսզի երբեք մեր խաչերու ծանրութիւնը չզգանք եւ չգանգատինք այլ ամէն անգամ որ մենք ալ իյնանք քեզի նման որտքի կանգնինք եւ քաջալերուած առջեւ հարաչանանք պարծենալով քու խաչովդ: Փրկէ՛ մեզ ամէն տեսակի աշխարհիկ ոգիներէն, օգնէ՛ եւ մխիթարէ՛ մեզ որպէսզի կարենանք յաղթահարել ամէն տեսակի մեր մարդկային տկարութիւններուն վրայ: Ամէն:

Հայր Մեր... Ողջոյն քեզ...Փառք Հօր

Խաչուած Յիսուս ողորմէ մեզի եւ գաւարանի բոլոր հոգիներուն:

Ութերորդ կայան

Յիսուս կը մխիթարէ Երուսաղէմի կիները

Երկրպագութիւն կ'ներ քեզի, Քրիստոս եւ կ'օրհնէմ քեզ որովհետեւ սուրբ խաչովդ աշխարհը փրկեցիր

Յաւագին Յիսուս, քու անցած տաժանելի ճանապարհին վրայ, դուն հանդիպեցար այն կիներուն որոնք քեզի ծառայած էին քու քարոզչութեանդ ընդացքին, անոնք դառն արցունքներով կը ողբային տեսնելով քու տառապանքներդ ու չարչարանքներդ: Սակայն դուն քու այդ վիճակդ նկատի չարիր եւ դառնալով մխիթարեցիր անոնց ցաւագին սիրտերը ըսելով: «Ո՛վ Երուսաղէմի աղջիկներ , իմ վրաս մի՛ լաք, հապա ձեր վրայ ու ձեր գաւակներուն վրայ լացեք վասնզի ահա օրեր պիտի գան, որոնց մէջ պիտի ըսեն: Երանի՛ ամուլներուն եւ այն որովայններուն որոնք չծընան եւ ծիծերուն որոնք կաթ չտուին»:

Ո՛վ Տէր Յիսուս, կ'աղօթենք որ դուն անսահման գթութեամբ նայիս մեր վրայ քու թանկագին արիւնովդ գնուած հօտդ: Պահէ՛ պահպանէ մեզ ամեն տեսակի տեսանելի եւ անտեսանելի վտանգներէն նաեւ հոգեկան եւ մարմնական փորձութիւններէն եւ յատկապէս մեր գաւակներուն ոտքերը ծածկէ քու արեանդ պատնէշին տակ որպէսզի անոնք մեղքի տիղմէն հեռանան: Ի վերջոյ անոնք քու տուած նուերներդ են մեզի, Ամէն:

Հայր Մեր... Ողջոյն քեզ...Փառք Հօր

Խաչուած Յիսուս ողորմէ մեզի եւ գաւարանի բոլոր հոգիներուն:

Իններորդ կայան

Յիսուս երրորդ անգամ կ'իյնայ

Երկրպագութիւն կ'ներ քեզի, Քրիստոս եւ կ'օրհնէմ քեզ որովհետեւ սուրբ խաչովդ աշխարհը փրկեցիր

Աստուածային փրկիչ, Գողգոթայի ստորոտը հասած դարձեալ ինկար խաչիդ ծանրութեան տակ: Անգամ մը եւս այդ Աստուածաին դէմքդ ծածկուեցաւ փոշիով եւ արիւնդ վերքերէդ արատօրէն հոսեցաւ, այդ բոլորը նաեւ մեր մեղքերու ծանրութիւն էր: Տէր քանի եւ քանի անգամներ մենք արանց մտածելու գանգատանձ ենք մեր դժուարութիւններէն որ ոչ մէկ տեսակետով կարելի չէ զանազանել մեր եւ քու կրած խաչի ծանրութեան: Որքաին՛ ապերախտ գտնուած ենք քու բոլոր տուած շնորհքներուդ դիմաց եւ առանց շնորհակալութիւն յայտնելու տակաւին առաւել եւս դժգոհած ենք այս կեանքի նեղութիւններէն, միթէ դուն արդէն մեզի զգուշացուցած էրի ըսելով թէ: «Մրտերնիդ չխռովի ու չվախնայ, եւ աշխարհին յաղթայարեցի»: Ո՛վ Տէր, թոյլ տուր որ մենք ալ քեզ նման այդ կայտար եւ կատարեալ հաւատքով յաղթայարենք մեր նեղութիւններուն այս աշխարհի մէջ եւ հասնինք երկինքի փառքիդ: Ամէն:

Հայր Մեր... Ողջոյն քեզ...Փառք Հօր

Խաչուած Յիսուս ողորմէ մեզի եւ գաւարանի բոլոր հոգիներուն:

Տասերորդ կայան

Յիսուս իր զգեստներէն կը մերկացուի

Երկրպագութիւն կ'ներ քեզի, Քրիստոս եւ կ'օրհնէմ քեզ որովհետեւ սուրբ խաչովդ աշխարհը փրկեցիր

Անարատ Գառն Աստուծոյ, Տէր հզօր թագաւոր, թոյլ տուիր որ քեզմէ խլեն պատմուճանդ անգամ: Քեզ մերկ գամեցին այդ խաչափայտին վրայ ով բարեգութ Յիսուս, այս բոլորը որպէսզի մեր մարմնական ախորժակները զսպելու եւ մեր շնութեան մեղքերը քաւելու համար: Կը խնդրենք քեզմէ ով Յիսուս որ դուն ներես մեր մտքով եւ մարմնով գործած պիղծ եւ անմաքուր յանցանքները: Կ'աղաչենք պարգևէ մեզի բոլոր Սուրբ Հոգիի գեղեցիկ շնորհքները որպէսզի մերկանանք մեր մեղքերէն եւ առլցուինք Աստուածային շնորհքներովդ, թոյլ տուր որ մերկանանք աշխարհին ցանկութիւններէն եւ ողորուինք երկնաւոր բարիքներով եւ ցանկութիւններով: Ամէն:

Հայր Մեր... Ողջոյն քեզ...Փառք Հօր

Խաչուած Յիսուս ողորմէ մեզի եւ գաւարանի բոլոր հոգիներուն:

Տասնմեկերորդ կայան

Յիսուս խաչին վրայ կը գամուի

Երկրպագութիւն կ'ներմ քեզի, Քրիստոս եւ կ'օրհնեմ քեզ որովհետեւ սուրբ խաչովդ աշխարհը փրկեցիր

Երկրպագելի Յիսուս, մեր մարդկային ուղեղները անկարելի է ըմբռնէ քու սիրոյդ մեծութիւնը: Բայց միային քեզմէ եկած շնորհքով կարելի է հասկնալ մեր մեղքերու տգեղութիւնը եւ հոգիներու արժէքը քեզի համար: Քու անհուն տառապանքներդ ու նուաստացումներդ յետոյ թոյլ տուիր որ քեզ գամեն խաչին վրայ: Քու ձեռքերդ եւ ոտքերդ արիւնի վտակներ ցայտեցին եւ օծեցին խաչափայտը՝ մեր մեղապարտ հոգիները սրբացնելու համար: Անհունօրէն շնորհակալ ենք քեզմէ, որ այդչափ սիրած ես մեզ որ մեր սիրոյն համար մատնուեցար տաժան մահի: Անհաշիւ անգամներ մենք խաչած ենք քեզի մեր անհնազանդութիւններով եւ մեղքերով սակային անդրադարձելով մեր մեղաւոր էութիւնը կ'աղաչենք եւ հեծելով ու լալով ներողութիւն կը խնդրենք մեր յանցանքներուն համար: Ներէ՛ մեզի Տէր եւ թոյլ տուր որ ետ վերադարձանք եւ մնանք քեզմէ փխած շնորհքի տիղմին վրայ որպէսզի անգամ մը եւս քու սուրբ ճամբդ չ'շեղինք: Ամէն:

Հայր Մեր... Ողջոյն քեզ...Փառք Հօր

Խաչուած Յիսուս ողորմէ մեզի եւ գաւարանի բոլոր հոգիներուն:

Տասներկրորդ կայան

Յիսուս խաչին վրայ կը մեռնի

Երկրպագութիւն կ'ներմ քեզի, Քրիստոս եւ կ'օրհնեմ քեզ որովհետեւ սուրբ խաչովդ աշխարհը փրկեցիր

Խաչուած Փրկիչ, ահա բազուկներդ տարածած՝ խաչին վրայ ես: Վերջին խօսքերդ ուղեցիր նախ թշնամիներուդ: «Հայր Իմ, ներէ՛ անոնց որովհետեւ չեն գիտեր թէ ին՛չ կ'ընեն»: Ապա մեղաւորին դառնալով ըսիր: «Այսօր իսկ, ինծի հետ պիտի ըլլաս արքայութեան մէջ»: Իսկ հաւատիր՝ արաքեալիդ քու սիրելի Մայր հանցնեցիր եւ Մարիամին ալ դառնալով Յովաննէսը հանցնեցիր: Ահրելի չարչարանքներուդ մէջ ծառաւ զգացիր, բայց մահուան դառնութիւնը չէր բաւեր անոնք քեզ առելի անարգեցին գացախ տալով չորի տեղ: Իսկ զգեստներդ կտակեցիր դահիճներուդ արիւնդ երկրին, մարմինդ գերեզմանին, Մայրդ Յովաննէսին, եւ Հոգիդ Երկնաւոր Հօրդ: Վերջին խօսքդ արտասանած ատեն գլուխդ խոնարհեցուցիր եւ հոգիդ աւանդեցիր «փրկագործութեան խորհուրդը կատարուած է:»

Գոհութիւն եւ պատիւ կուտամ քեզ ով սիրելի փրկիչս որովհետեւ քու այս դառն մահովդ յամային մարդկութիւնը փրկեցիր մեղքի տիղմէն: Ամէն:

Հայր Մեր... Ողջոյն քեզ...Փառք Հօր...Խաչուած Յիսուս ողորմէ մեզի եւ գաւարանի բոլոր հոգիներուն:

Տասներորդ կայան

Յիսուս խաչին վար կ'առնուի

Երկրպագութիւն կ'ներմ քեզի, Քրիստոս եւ կ'օրհնեմ քեզ որովհետեւ սուրբ խաչովդ աշխարհը փրկեցիր

Վշատից Մայր, քանի սուրբ խոցեցին քու մայրական ազնիւ սիրտդ, երբ բազուկներուդ մէջ առիր Անբովանդակելին, որ մեզի համար մեռաւ: Արդէն վիշտ ու տառապանք եղած էր քու ամբողջ կեանքդ: Դուն քայլ առ քայլ հետեւեցար Որդիիդ իր չարչարանքներու ճանապարհին եւ ապրեցար իր կրած բոլոր ցաւերը:

Կ'աղաչենք, Մայր, յիշէ՛ Որդիիդ վերջին պատգամը, երբ նա յանձնարարեց որ դուն ըլլաս ամենուն Մայրը, դուն մտահոգուիս նաեւ մեր փրկութեամբ: Կատարէ՛ այն սուրբ պատգամը ով գործալի Մայր մայրերու եւ մեզ ալ բազուկներուդ մէջ առ: Բարեխօսէ՛ Աստուածաբան Որդիիդ մեզի մեղաւորներու համար, որ արժանի ըլլանք անոր խօստումներուն: Մենք կուգենք, քու հովանաւորութեանդ ներքեւ ապրելով ու քու պաշտպանութեանդ տակ մեռնելով, երկինք հասնինք եւ քու հետդ միասին միատեղ պաշտենք ամենակալ Աստուած, Որդիին եւ Սուրբ Հոգին: Ամէն:

Տասնչորրորդ կայան

Յիսուս գերեզման կը դրուի

Երկրպագութիւն կ'ներ քեզի, Քրիստոս եւ կ'օրհնէմ քեզ որովհետեւ սուրբ խաչովդ աշխարհը փրկեցիր

Ամենասիրելի Փրկիչ, բարեկամներ փութկոտ գուրգուրանքով քեզ գետեղեցին սուրբ գերեզմանի մոայլ եւ մութ խորոշին մէջ, գլխահակտրոտում գացին իրենց տուները:

Դուն Աստուած եւ Տէր, չնչին արարածի մը սիրոյն համար քու ազատ կամքովդ ցանկացիր խաչի վրայ տաժան մահ մեռնիլ: Ո՛վ յաւիտեան Քահանայ Մելքիսեդեկի կարգին ուղեցիր կեանքի դառնութիւնները խորապէս ապրիլ, մահանալ երրորդ օրը յարութիւն առնել եւ յաղթահարել մահուան: Մեզի օգնէ բարեգութ Յիսուս որպէսզի մենք ալ մահէն չսարսափինք, այլ յուսադրուինք ու հաւատանք որ մենք ալ քու ժամանակիդ մարմնով յարութիւն պիտի առնենք:

Ամենաբարի Յիսուս, լոյս պարգեւէ՛ մեզի, որ մահուան ժամանակ մենք ալ յարութեան յոյսով տոգորուինք:

Թոյլ տուր որ առանց սուրբ հաղորդութեան խորհրդով այս աշխարհէն չբաժնուինք, այն գիտակցութեամբ որ արժանաբար ստանանք եւ ճաշակենք քու թանկագին մարմին ու արիւնը որպէսզի մեր հոգիները լոյսի նման փայլին յարութեան օրը: Ամէն:

Աղօթք Յիսուսի խաչին առջեւ:

Ո՛վ բարի ամենահեզ Յիսուս, կ'երկրպագեմ քու առջեւ եւ բոլոր սրտովս կ'աղօթեմ քեզի, եւ կը պաղատիմ որ հաճիս դրոշմել սրտիս մէջ հաւատքի, յոյսի եւ սիրոյ վառ զգացումները, ճշմարիտ զոջում մեղքերուս վրայ եւ հաստատուն առաջնորդութիւն անոնց մէջ նորէն չիյնալու: Մինչ այդ սրտի խոր ցաւով եւ կարեկցութեամբ՝ կը մտաբերեմ քու հինգ վերքերդ ու կը խորհրդածեմ անոնց վրայ, յիշելով այն խօսքերը զոր Դաւիթ մարգարէն կ'սէր քեզի համար սաղմոս 22 մէջ: Ո՛վ բարի Յիսուս. **«Ծակեցին ձեռքերս եւ ոտքերս, հաշուեցին բոլոր ոսկորներս:»**